



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ

«27» Եպրաբ

2021 թվականի N 175-Ճ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 48-Լ ՈՐՈՇՄԱՆ
ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մարտի 30-ի «Հաշվեքննիչ պալատի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 48-Լ որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Հավելվածի 5-րդ գլխի ձևանմուշ 2-ի 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերի համապատասխանաբար «Հաղորդման 1-ին մաս՝», «Հաղորդման 2-րդ մաս՝» և «Հաղորդման 3-րդ մաս՝» բառերը հանել,

2) Հավելվածի 5-րդ գլխի ձևանմուշ 3-ի 3-րդ և 4-րդ ենթակետերի համապատասխանաբար «1-ին մաս» և «2-րդ մաս» բառերը հանել,

3) Հավելվածի 5-րդ գլխում «Ձևանմուշ 1» բառից առաջ լրացնել նոր «63. Ձևանմուշներ 2 և 3-ի տեքստային հաջորդականության ընտրության մեջ Հաշվեքննիչ պալատը ազատ է» կետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ



Լ. ՅՈԼՅԱՆ